ինքնորոշման հիմունքով», բայց և շտապում է աւելացնել, թէ «չպէտք է խառնուել հարեւան պետութիւնների ներքին գործերին», այսինքն՝ ձեռք քաշել թրքահայկական դատից:

Կառավարութեան կազմութեան հարցում Աղայեւը դնում է «խիստ կօալիցիայի» պահանջը՝ հաշուի առնելով «ազգային խմբերի իրական համեմատութիւնը»: Միատարը–ընկերվարական իշխանութիւնը անընդունելի է միանգամայն: Պատճառը հասկանալի է. մահմեդականների մէջ տիրող տարրը բէգերն ու կալւածատէրերն էին:

Անդրկովկասի վարչական բաժանման վրայից Աղայեւը անցնում է լռութեամբ, բայց ազրբէջանցիների ընդհանուր քաղաքականութիւնից գիտենք, որ նրանք վճռականապէս հակառակ էին հայկական ծրագրին, որի դէմ պայքարում էին 1916–ի զէմստուոյական խորհրդակցութիւններից սկսած:

Վրաց բաղձանքները արտայայտեց Ժորդանիան, որ իր առաջադրած խնդիրներով աւելի մօտենում էր ազրբէջանցիներին, թէև խօսքերով աշխատում էր ցոյց տալ հակառակը:

Ռուսաստանի հարցում նա, ըստ էութեան, կանգնեց Աղայեւի տեսակէտի վրա. «Ժողովրդական կոմիսարների խորհրդի ընդունած հաշտութեան վերջին պայմանները, որոնք ամբողջ Ռուսաստանը մատնեցին գերման իմպերիալիստների քաղաքական ու տնտեսական գերութեան, է՛լ աւելի կտրեցին մեզ Ռուսաստանի հետ կապող թելերը: Եւ մեր Սէյմը այժմ իրեն համար հիմնական նպատակ պէտք է դնէ սեփական ուժերով այս երիտասարդ երկիրը՝ Անդրկովկասը վերածել իրաւականօրէն կազմակերպուած Անդրկովկասեան Հանրապետութեան»: Ա՛յս կէտում տարբերութիւն չկայ Ժորդանիայի և Աղայեւի միջև:

Յետոյ, Անդրկ. Հանրապետութեան Սէյմը, առաջին հերթին, պէտք է հաշտութիւն կնքէ թիւրքերի հետ, բայց ո՛չ այնպիսի հաշտութիւն, որպիսին ստորագրեցին բոլշեւիկները. «Մենք այդպիսի հաշտութիւն չենք ստորագրի և կարծում ենք, որ աւելի լաւ է մեռնել պատուով դիրքերում, քան խայտառակուել և սերունդների անէծքին ենթարկուել»: Այս կէտում, Ժորդանիան Քաջազնունու հետ է. նա պահանջում է «պատուաւոր հաշտութիւն», թէեւ յետագայ դէպքերը ցոյց տուին, որ Ժորդանիայի «պատուաւոր հաշտութիւնը» շատ քչով է տարբերւում Աղայեւի «անպատիւ» հաշտութիւնից:

Իշխանութեան կազմութեան խնդրի վրայից Ժորդանիան անցաւ լռութեամբ. փափուկ դրութիւն էր. եթէ պահանջէր միատարը–ընկերվարական կառավարութիւն, ինչպէս պահանջում էր յեղափոխական խորհուրդների կենտրոնում, դժգոհ կը լինէին ազրբէջանցիները. եթէ պահանջէր կօալիցիոն կառավարութիւն, ինչպէս գործնականօրէն անց էր կացնում Սէյմի կուլիսներում, դժգոհ կը մնային յեղափոխական խորհուրդները: Ահա մի տեղ, որտեղ լռութիւնը իսկապէս ոսկի էր:

Անդրկովկասի սահմանների վերաբաժանման հարցում Ժորդանիան պաշտպանում էր Դաշնակցութեան տեսակէտը.«յենուելով հողային սկզբունքների վրա՝ մենք պէտք է գոյութիւն ունեցող ազգերը սահմանաբաժանենք այնպէս, որ միմեանց չխանգարեն, ընդհակառակը, որ նրանք կարողանան աջակցել միմեանց և միացեալ ու ընդհանուր ջանքերով դուրս բերեն մեր